

ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
«ՎԱՆԱՁՈՐԻ ՀՈՎՀ. ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ
ԻՆՍՏԻՏՈՒՏ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ (ՎՊՄԻ)

«Հաստատում եմ»

ՎՊՄԻ ռեկտոր, ք.գ.դ. պրոֆ.

Խաչատրյան Գ.Կ.

“_27_” _10_____ 2011թ.

ԿԱՐԳ

ՄԱՐԶԱԿԱՆ ԳՈՒՅՔԻ ՁԵՌՔԲԵՐՄԱՆ, ՀԱՏԿԱՑՄԱՆ ԵՎ
ԽՈՏԱՆՄԱՆ

Հաստատվել է ՎՊՄԻ գիտխորհրդում

Արձանագրություն թիվ ...9..

“_27_” _10_____ 2011թ.

Վանաձոր

2011

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

- 1.1. Սույնով սահմանվում է «Վանաձորի Հովհ. Թումանյանի անվան պետական մանկավարժական ինստիտուտ» պետական ոչ առևտրային կազմակերպությունում (այսուհետ՝ «Ինստիտուտ») մարզական գույքի ձեռքբերման, հատկացման և խոտանման կարգը:
- 1.2. Կարգը մշակվել է համաձայն Ինստիտուտի կանոնադրության, Ինստիտուտի ներքին կարգապահական կանոնակարգի, «Գնումների մասին» ՀՀ օրենքի և գույքի խոտանման մասին ՀՀ կրթության և գիտության նախարարության կողմից հաստատված կարգի:

II. ՄԱՐԶԱԿԱՆ ԳՈՒՅՔԻ ՁԵՌՔԲԵՐՄԱՆ, ՀԱՏԿԱՑՄԱՆ ԵՎ ԽՈՏԱՆՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ ԵՎ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ

- 2.1. «Տիզիկական կուլտուրա և սպորտ» բաժնում, Ինստիտուտում և ՎՊՄԻ հենակետային վարժարանում ֆիզ. դաստիարակություն առարկայի դասավանդման, ինչպես նաև մարզական խմբակների և սպորտային միջոցառումների համար նախատեսվող մարզական գույքը ձեռք է բերվում ուսումնական տարվա ավարտին՝ ըստ ընդհանուր ֆիզ. դաստիարակության և արտակարգ իրավիճակների հիմնահարցերի, ֆիզ. դաստիարակության տեսություն և մեթոդիկա ամբիոնների, ՎՊՄԻ հենակետային վարժարանի և մարզառազմական և հայրենասիրական դաստիարակության կենտրոնի կողմից նախապես ներկայացված հայտերի (հայտերը ներկայացվում են նույնբերին՝ հաշվապահություն):
- 2.2. Ձեռք բերվող գույքի ցուցակը հաստատվում է հանձնաժողովի կողմից, որը կազմավորվում է ռեկտորի հրամանով:
- 2.3. Գույքի ձեռք բերման համար հայտարարվում է մրցույթ համաձայն գնումների մասին ՀՀ օրենքի:
- 2.4. Գնման ժամանակ գույքի որակի նկատմամբ հսկողությունն իրականացվում է ամբիոնների և մարզառազմական և հայրենասիրական դաստիարակության կենտրոնի ներկայացուցիչների կողմից:
- 2.5. Գնված գույքը մուտքագրվում է Ինստիտուտի պահեստ:
- 2.6. Ամբիոններին, ՎՊՄԻ հենակետային վարժարանին և մարզառազմական և հայրենասիրական դաստիարակության կենտրոնին գույքի հատկացումը կատարվում է ուսումնական տարվա սկզբին (օգոստոսի 20-30) Ինստիտուտի պահեստից գույքի վրա ՎՊՄԻ ՊՈԱԿ-ին պատկանելության մասին համապատասխան նշում կատարելուց հետո՝ ըստ պահանջագրի:
- 2.7. Օգտագործման համար ոչ պիտանի մարզական գույքի խոտանումը կատարվում է ՀՀ կրթության և գիտության նախարարության կողմից հաստատված կարգի համաձայն:
- 2.8. Օգտագործված (խոտանված) գույքը ետ է վերադարձվում խոտանող հանձնաժողովին ուսումնական տարվա ավարտին:
- 2.9. Խոտանող հանձնաժողովը ՎՊՄԻ ՊՈԱԿ-ին մարզական գույքի պատկանելության մասին նշումն ստուգելուց հետո համապատասխան ակտով կատարում է խոտանում:
- 2.10. Հանձնաժողովը, ելնելով մարզական գույքի տարբեր տեսակների պիտանելիության աստիճանից, կարող է թույլատրել դրանց հետագա օգտագործումը: